

Հարց

Որո՞նք են լիցենզավորման սկզբունքները:

Պատասխան

Լիցենզավորման սկզբունքներն են՝

1)անձանց իրավունքների, օրինական շահերի, բարքերի և առողջության պաշտպանությունը, պետության պաշտպանության և անվտանգության ապահովումը.

2)Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության բնագավառում միասնական քաղաքականության ապահովումը և մեկ միասնական լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի սահմանումը.

3) լիցենզավորման միասնական կարգի և սկզբունքների սահմանումը.

4) լիցենզավորման հրապարակայնությունը.

5) լիցենզավորման գործընթացի օրինականության ապահովումը.

6)լիցենզավորման գործընթացի պարզեցումը և թափանցիկության ապահովումը.

7)լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության պահանջների խախտման համար պատասխանատվության միասնական չափանիշների և տեսակների սահմանումը: